Շալվեր(1) Սերոբ տանդալախ,(2)
Ի՞նչ ես աոխատար(3) ուրախ,
Ձեռքով ոտքով կը դողաս,
Փառքիդ մէջը կը լողաս:

Ի՛նչպէս չիլամ (4) ես ուրախ,
Ասաց Սերոբ տանդալախ.
Ե՞փ(5) եմ առած Միլիւքին,
Համաձայն եմ խըրատին:

Գուլխուն գէշ օյին(6) պէրին.
Ձեռքը ոտքը թալցուցին(7).
Կ'առին սոլ սէմթն (8) է տամլա (9),
Սէօգտէ տաք ջուր պիտ երթայ:

Զա՛ր տանդալախ, ի՞նչ արիր,
Խոմ անդանակ մորթեցիր
Աշխատաւոր Միլիւքին
Հետն ալ անմեղ տաս հոգին(10):

Այպէս թո լայ(11), օխ, թո լայ.
Ալայ աշխարհ(12) թո կիտնայ
Որ տանդալախ Սերոբ-աղ(13)
Հալխին կուլխուն է տոփան(14):

Ուժըս այպէս ճանչընայ,
Տայմա(15) ինձմէն վախնայ:
Տանտիլիկի(16) պէս ման-ման՝
Քաղաքին հետ կը խաղամ,
Հէմ ստակներուն տէր կլամ(17),
Դէմ կեցողին կը պատռեմ,
Գործն, անունը կ'անըռեմ(18),

Հէմ տէր եմ ես, հէմ աղա,
Ինծի հետ չիլալ(19) շախա(20).
Տիզի(21) պէս ձեզ կըպած եմ,
Արուններըդ կը ծըծեմ.
Ձեզի տայմա կը խեւցնում(22),
Գէշը թէօյֆէ(23) կը ցուցնում.
Ինչ բան ալ անիք աղէկ,
Ալայն կը չըրջեմ(24) մէկ մէկ:

Պապուկ աղան(25) չի մեռաւ,
Մէջըս յարութիւն առաւ,
Օյինները Խալիպին
Կոլոխներուդ կը պէրիմ(26):
Համը առէք պուտուղին
Ծիզվիթական ուսումին.
Ձերէ վարպետ ճիզվիթի
Խրատին մուխայէթ(27) էի.
Ի՞նչ ուփռավ, ի՞նչ կոլովա(28),

---

1)Շալվեր, *խարդախ*: 2)Տանդալախ, *հաստղը-լուխ*,: 3)Աոխատար, *այդչափ*: 4)Չիլամ, *չըլ-լամ*: 5) Եփ, *երբ*: 6) Օյին, *խաղ*: 7) Թալցնել. *ուժաթափ ընել, նուաղեցնել*: 8) Ձախ կողմը: 9) *Կաթուած*: 10) *Որպէս թէ*: 11) *Թող ըլլայ* 12) *Ամբողջ աշխարհ*: 13)*Սերոբ աղան*: 14) *Ժողովուրդին գլխուն թոպ մըն է*: 15) *Շարունակ*:

16)*Հոյ*: 17) *Թէ՛ դրամներու տէր կ'ըլլամ*: 18) Կը *ճզմեմ*: 19)*Չ'ըլլար*: 20)*Կատակ*: 21)*Ոչխարի ոջիլ*: 22) Կը *խենթեցնեմ*: 23)*Տգեղը գեղեցիկ կը ցուցընեմ*: 24)*Բոլորը տակնուվրայ կ'ընեմ*: 25)*Պապուկ աղան՝ Նոր-Նախիջեւանի հին ջոջերէն մէկուն անունն է*: 26) *Խալիպին պէս խաղեր պիտի խաղամ ձեր գլխուն: Յարութիւն Խալիպ, Նոր-Նախիջեւանի յայտնի մեծ աղան, բանակալ, շահամոլ, ամէն ինչ իր ձեռքն առած եւ ամէն բանէ անձնապէս օգտուիլ ձգտող մեծատունի տիպար, բարեկամ էր Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսին, որ զայն անուաներ էր գանձապահ եկեղեցիներուն, եւ այդ գանձին մեծ մասն իրեն էր պահեր: Մ. Նալբանդեան անոր դէմ մղեց բուռն պայքար մը, եւ օգնութեամբ Մատթէոս կաթողիկոսին՝ յաջողեցաւ անկից կորզել յափշտակուած գումարներուն մէկ մասը, որով հիմնուեցաւ Խալիպեան վարժարանը Խրիմի մէջ*:

digitised by A.R.A.R.@

Ե՛ս եմ fաղաfիս ադա·
Ձէ՞f հաւատալ ասածըս,
Աղէկ տեսէf արածըս,
Հէմ ուփռավ, հէմ կոլովան
Իմ տուտուկով(29) կը խաղան:
Սեմինարին(30) կը մորթեմ,
Արուեստական(31) կը խորթեմ(32)
Արուեստական կը մորթեմ,
Սեմինարին կը խորթեմ:
Սեւը ճերմակ կը ցուցնում,
Ճերմակը սեւ կը ճանչցնում·
Ասպէս fաղաf ման պերի(33)
Հաշվէ տասնըմէկ տարի,
Տայա՛ տէյէմիշ չարիf(34),
Միամի՛տ Նախջըւանցիf,
Ես ո՞ր մէկին չըջիլ եմ,
Ձեռfի տակը տանջիլ եմ·
Հէմ ձեր զէնկին (35) խաչուկին,
Հէմ ձեր հէfիմ Սահակին (36)·
Մուխալին (37) ալ մահն եկաւ,
Պանfէն(38) գերեզման տարաւ:
Շտէ(39) վով լալըս կիտցէf(40),
Սաստանեցէf դողացէf:
Նափիլէ(41) չէ Եւրոպան
Ճիզվիթներուն է տուշման(42)·
Ճիզվիթն ուտեխ(43) ոտf կոխէ,
Կը խըղդէ ու կը կախէ
Վով որ դէմ կենայ նորան·
Այս հրամայեց Լօյեօլան·
Ճիզվիթ լալըս չիտէի՞f(44),
Միամիտ Նախջըւանցիf:

---

27) *Հետեւող*: 28) Ուփրավա (*ռուսերէն*) *քաղաքային վարչութիւն*· կոլովա (*ռ.*) *քաղաքագլուխ*: 29) *սուլիչ*: 30) *Թեմական դպրոց*: 31) *Արուեստական վարժարան, արհեստագիտական դպրոց, որ հիմնուեցաւ Նոր-Նախիջեւանի մէջ* 1880*ին*: 32) *կը չինեմ*: 33) *քաղաքը մատիս վըրայ խաղցուցի*: 34) *Դեռ, չհասկցա՞ք, չկռահեցի՞ք*: 35) *Հարուստ*: 36) *Սահակ Ալաճալեան, բժիշկ*: 37) *Ն. Նախիջեւանցիք* Մուխալ (*Միքայէլ*) *անունը Միքայէլ Նալբանդեանին կուտային*: (38) Պանfը *հոս* բանտի *տեղ գրուած է*: (39) *Ահա*: (40) *Ով ըլլալս գիտցէք*: (41) *Պարապ տեղը չէ*: (42) *Թշնամի*: (43) *Որտեղ*: 44) *Ճիզվիթ ըլլալս չէի՞ք գիտեր*:

digitised by A.R.A.R.@